

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

**«Եւ եկն ի Նազարէթ ուր սնեալն էր. և եմուտ ըստ սովորութեան իւրում յաւոր շաբաթու ի ժողովուրդն»:**

**«Եւ Նազարէթ գալով, ուր մեծցած էր, մտաւ ժողովարան ինչպէս իր սովորութիւնն էր»:**

(Ղուկ. Գ:16)

Աստուածորդին անապատին մէջ սատանայէն փորձութեան ենթարկուելէ ետք դարձաւ Գալիլիոյ Նազարէթ քաղաքը, ուր սնած և մեծցած էր, և Շաբաթ օրով ժողովարան գնաց աղօթելու, ինչպէս իր սովորութիւնն էր: Ղուկաս Աւետարանիչ կը շեշտէ «ինչպէս իր սովորութիւնն էր» խօսքը: Այս շորս բառերը հայ հաւատացեալին - մանաւանդ մեր վանքաբնակ ժողովուրդին - բաւական բան պէտք է ըսեն, ո՛չ միայն իր իմաստին համար, այլ նաեւ այն իրողութեան համար, որ ան կը կրկնուի երիցս. առաջինը՝ կը պատահէր Նազարէթի մէջ, մինչ երկրորդը՝ Համբարձման Լեռ, ըստ Աւետարանի խօսքին, «Ան բարձրացաւ Համբարձման Լեռ, ինչպէս իր սովորութիւնն էր»: Եւ երկու պարագաներուն ալ աղօթելու նպատակով: Որովհետեւ Յիսուսի համար աղօթելը բնական և ինքնեկ բան մըն էր, սովորութիւն մը, որ կը պակսի մեր ներկայ սերունդին: Ան կ'աղօթէր թէ՛ առանձին և թէ ժողովարաններու մէջ, արդի բացատրութեամբ եկեղեցիներու մէջ:

Մեր ժողովուրդին, մանաւանդ երիտասարդ սերունդին երբ հարց տրուի թէ «ինչո՞ւ եկեղեցի չեն գար» չքմեղանալու և ինքնարդարացման համար կը կրկնեն յանկերգը, «Ուր որ աղօթես Աստուած հոն է, այնպէս չէ՞»: Ու դժբախտաբար այս խօսքը կու գայ ոչ միայն աշխարհով մէկ սփռուած հայերէ, այլ նոյնիսկ Երուսաղէմի մեր վանքաբնակ ժողովուրդէն, որոնք կ'ապրին հազիւ մի քանի մեթր հեռու Սուրբ Երկրի փառքը կազմող Սրբոց Յակոբեանց պատմական հիասքանչ տաճարէն: Այսօրուան մեր երիտասարդ սերունդը գրեթէ ամէն երեկոյ կը յաճախեն իրենց ակումբները, ինչ որ քաջալերելի է, սակայն կը յուլանան շաբաթը անգամ մը եկեղեցի մտնելու, որովհետեւ այսօրուան նոր սերունդի ընթացքը արդիւնք է և շարունակութիւն իրենց ծնողներու անտարբերութեան, որոնք ժամանակին անպայման իրենց կրօնի դասապահներուն լսած էին մեր Տիրոջ պատգամը. «Տո՛ւք զկայսերն՝ կայսեր և զԱստուծոյն՝ Աստուծոյ»:

Յաճախ լսած ենք կարգ մը մարդոց եկեղեցի չերթալու իրենց արդարացումը, ուր պատճառը չարդարացներ նպատակը երբ կ'ըսեն, թէ իրենց եկեղեցի չերթալու պատճառը այս կամ այն եկեղեցականն է: Ասոնք կը մոռնան որ իրենք եկեղեցի չեն երթար տուեալ եկեղեցականին կամ եկեղեցականներուն համար, այլ միայն իրենք իրենց և Աստուծոյ համար:

Անկասկած մեր Տէրը ժողովարան կ'երթար որովհետեւ կը հաւատար հաւաքական աղօթքի, ըլլալու իր իսկ ժողովուրդին հետ: Երեւակայեցէք թէ մեր նախնիքները ըլլա-

յին նման այս դարու մեր սերունդին, անպայմանօրէն մենք պիտի շունենայինք մեր մշակոյթի և ճարտարապետութեան փառքը կազմող մեր վանքերն ու եկեղեցիները: Ծանծաղամիտ մարդիկ կ'ըսեն. «Մենք զԱստուած կը գտնենք պարզկայ երկնքին տակ, անտառներու կամ բացօթեայ դաշտերու մէջ, միով բանիւ բնութեան մէջ»: Եթէ իսկապէս ասոնք զԱստուած կը փնտռեն, ինչո՞ւ զինք եկեղեցւոյ մէջ չեն փնտռեր: Անշուշտ Աստուածորդին համար Աստուած Գալիլիոյ լեռներու գեղեցկութեան, Տիբերիոյ լիճին մէջ և կամ Երուսաղէմի պայծառ երկնքի տակն էր, սակայն Անոր մանկական յիշողութիւնը զինք կը կապէր Նազարէթի աղօթատեղիներուն, ուր ինք կը խորհէր իր Հօր՝ Աստուծոյ մասին, և ուր Ան պիտի սկսէր ինքզինք յայտնաբերել: Յետոյ, աղօթատեղիները կը շաղկապէին ներկան՝ անցեալին: Հոն կատարուող ամենօրեայ արարողութիւններն ու աղօթքները իրեն համար յիշեցում մըն էին իր ժողովուրդի անցեալէն եկած: Այդ ժողովուրդներուն մէջ անմիջական կարիքը, յոյսերն ու ձգտումները այդ ժողովուրդին այլեւս պատահական բաներ չէին, այլ անցեալէն եկող խոստումը բոլոր սերունդներուն:

Յետոյ, աղօթատեղի կը նշանակէր հաւաքականութիւն, ուր իրաւ հաւատացեալին հաւատքի կայծը կրնար բոցավառիլ, որովհետեւ առանձնացած հոգիին մէջ կրակը դատապարտուած է մարելու, ինչպէս ածուխի կտորը առանձինն չկրնար բոցավառիլ, բայց մի քանի կտորներ միասին առած կարելի կ'ըլլայ ստեղծել կրակ, նոյնպէս ալ մարդոց հոգիները կը բոցավառին ու կը ջերմանան երբ իրար քով կու գան ու միասին կ'աղօթեն:

Ժամանակը եկած է, որ մենք հայերս, օրինակ առնենք և կարգի դնենք մեր նախապատուութիւններն ու վարակուինք հրեայ ժողովուրդի աղօթելու մարմաջէն և Ս. Պատարագի օրերը յատկացնենք հաւաքական աղօթքի, ինչպէս մեր երանելի նախահայրերը կ'ընէին:

**Ն.Ա.Մ.**

